



Հովհաննես Թումանյան

Մի կաթիլ մեղրը

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր ծախում:
Օրվան մի օր մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն ետևից

Ներս է մտնում մի զրո չոքան.
Բարի օր քեզ, ա'յ խանութպան,
Մեղրը չունե՞ս,
Մի քիչ տաս մեզ:
Ունեմ, ունեմ, չոքան ախապեր.

Ամանդ ո՞ւր է, ամանըդ քեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
Էս սրհաթին քաշեմ տամ քեզ:

Էսպես հանգիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով

Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած:
Տը՞զզ, էն կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիին վեր է գալի:
Ճանճի վըրա, թարուն-թարուն,

Էս խանութի տիրոջ կատուն

Դուրս է ցատկում,

Թաթով զարկում...

Բայց հենց կատվի ցատկելու հետ

Հովվի շունը իսկույն և եք

Հաֆ է անում,

Վեր է կենում,

Խեղճ փիսիկին

Դընում տակին,

Զեռաց խեղդում

Ու շրպըրտում:

Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն,

Ա՛յ սատկես դու, շան որդու շուն,-

Բարկանում է խանութպանը

Ու ձեռն ընկած մոտիկ քանը

Տուր՝ թե կտաս շան ճակատին,

Շուն է տալի կատվի կողքին:

Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունըս,

Իմ ապրո՛ւստըս, տե՛ղըս, տո՛ւնըս...

Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,

Անխիղճ, լիրք, չար, ֆըլան–ֆըստան,

Ո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,

Դե, զարկելը հիմի դու տես...

Գոռում է մեր աժդահակը,

Մեծագլուխ իր մահակը

Ես է տանում ու ցած քերում,
Խանութպանին շեմքում փրռում:

Հսպանեցի՞ն... հայ, օգնությո՞ւն...
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Զեն է տալի մեկը մյուսին.

Հայ, օգնությո՞ւն... լսպանեցի՞ն...
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վըրից, գործի տեղից,
Ճիշով, լալով,
Հարայ տալով,

Էլ հերն ու մեր.
Քիր ու ախաբեր,
Կին, երեխսեր,
Ընկեր տըղեր,
Չորանչ, աներ,

Քավոր, սանհեր,
Քենի, փեսա...
Ինչ իմանաս էլ՝ ո՞վ է սա,
Գալիս են ու անվերջ զալիս,
Ով զալիս է՝ տուր թե տալիս.

Տո՛, կոպիտ արջ, տո՛, վայրենի,
Ես տեսակ էլ քա՞ն կըլինի.
Դու առուտուր եկար անես,
Թե՞ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,
Աղջան անում, մեջտեղ ձրգում,
Իր շան կողքին երկար ու մեկ:

Դե՛, ձեր մեռելն եկեք տարեք:
Ու էստեղից բոթը գընում,
Գընում մոտիկ զյուղն է հասնում.

Հե՛յ, օգնեցե՛ք,
Մեռած հն չեք,
Ըսպանեցին մեր զյուղացուն...

Ինչպես շընածանճի մի բուն
Քանդես, թողնես,

Էն ճանճի պես
Ամբողջ զյուղով օրդու կապում,
«Բու՛հ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.

Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փետով,
Որը ձիով, որը ոսով,
Որն անզըտակ, որը բորիկ

Դեպի դուշման զյուղը մոտիկ:
Տն՛, էսպես էլ անիրավ զյո՛ւղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.
Մարդ գընում է առուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սրբի:

Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր աղաթին...
Գընա՛նք, զարկե՛նք,
Զարդե՛նք, կրակե՛նք...
Հա՛յ, հն՛յ, հառա՛ջ, դե՛ ձեզ տեսնե՛մ...

Ու դուրս եկան իրարու դեմ,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
Ենքան ավել կատաղեցին,

Զարդեցին իրար,
Զընջեցին իրար,
Կորան, գընացին
Գետնին հավասար:

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից

Եսքան մոտիկ, սահմանակից
Ես զյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի:
Մի տերության թագավորը,
Երբ լսում է ես բոլորը,

Արձակում է հըրովարտակ
Ժողովրդին իր հըպատակ.
Հայտնի լինի մեր տերության,
Զինվոր, բանվոր, ազնվական
Ամեն շարքին

Ու աշխարհին,
Որ անօրեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,
Երբ մենք քընած էինք սիրով,
Մեր սահմանը մըտավ զոռով,

Ու կոտորեց սուրբ ձեռին
Մեր սիրելի զավակներին:
Արդ, սըրահար ու հըրակեզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,

Պատվեր տըլվինք մեր քանակին,
Թընդանոթով մեր ավերող
Ու աստուծով մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ ոխի
Մըտնի հողը մեր ոստիսի:

Մյուսը նույնպես իրեն հերթին
Գըրեց զորքին, ժողովըրդին.
Մարդկանց առաջ և աստղու,
Բողոքում ենք մեր դըրացու
Վարմունքի դեմ և շար, և նենգ,

Որ ոտքելով ամեն օրենք,
Բորբոքում է կըոիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո դաշը կապած:
Արդ՝ ակամա մենք ըստիապված,

Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհը,
Հանուն աստծու և իր փառքի
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա

Ու մեր սուրբ նորա վըրա:
Ու ըսկսեց կըոիվն ահեղ:

Շոհնդ, որոտ էստեղ, էնտեղ:
Կըրակն ընկավ շեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիշ, աղաղակ,

Ամեն կողմից սարսափ ու բռք,
Ամեն կողմից մեռելի հոտ...
Ամառ, ձըմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անքան,

Դաշտերն անցան,
Ու, կըրիվն չըդադարած,
Սովը եկավ համատարած:
Սովը եկավ սովի հետ ցավ,
Ծաղկած երկիրն ամայացավ...

Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
Էս ընդհանուր աղետը մեծ:

1909